

## Լրագրողների հավատարմագրում

«Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության N 333-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ պետական կառավարման մարմիններում լրագրողների հավատարմագրման օրինակելի կարգի» եւ ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմում լրագրողների հավատարմագրման կարգի համաձայն քաղաքաշինության նախարարությունն իրականացնում է նախարարության գործունեությունը լուսաբանող լրագրողների հավատարմագրում:

Հավատարմագրվելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝

1. աշխատակազմի ղեկավարի անունով երաշխավորագիր՝ լրատվամիջոցի ղեկավարի ստորագրությամբ,

2. մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափի (հնարավոր է թվայնացված),

3. անձնագրի պատճենը,

4. դիմում

Հավատարմագրումն իրականացվում է մեկ տարի ժամկետով: